

Ժողովուրդը պատկերացնում էր լոյսի եւ խաւարի տարբե-
 ռութիւնը, նոյնն էր եւ Ս. Թարգմանիչների օրով. այս երե-
 դմ է նորանից, որ եկեղեցական երգերից շատերի մէջ միակ
 բանատեղծական կէտը լոյսի եւ խաւարի, կեանքի եւ մա-
 հուան, արքայութեան եւ դժոխքի վերայ է հաստատուած,
 եւ եթէ ուշագրութեամբ կարդալու լինինք ի թիւս այլոց, Ա-
 զարդ յարութեան եւ Աւագ շաբաթու շարականները, որ Ս.
 Սահակ Պարթեւի գրչից են գործ եկել, մենք կրտսնինք, որ
 պատկերների մեծ մասը — յոյս, կեանք, անճանալիք եւ խօս-
 քերով է ամփոփուած. զորօրինակ. «Աղբիւր լուսոյ և ճառագայթ ան-
 ինջանէի լոյս. . . մարտի է ինչ զմեզ խաւարէն խորհրդոյ եւ լուսա-
 ւորեալ զմեզ. . . Լոյս է ի հայրական ծոցոյ ծագեալ հալածելով
 զխաւար մեզաց. . . » «Արիօղն զլոյս որպէս զօթոց. . . բնա-
 կեալ է լոյս անճառոյց. . . » «Լոյս է չորէ լուսոյ քաղցալ խաւար-
 փայլ զարդարեաց զԱզամ. . . » «Աղբիւր կենաց եւ անմահու-
 թեան անտուածային ձայնիւ որդայնոցիւր գմակ. . . » «Յապտուա-
 ծային ձայն է գոչմանն ասորցիցն որդալով կարասելիք որ խաւարց. . .
 » «Չայն եցեր Ազարու եւ որդայնաւ մահ, որ խաւարց արարեցաւ, արա-
 կանալիքն լուսաւ. . . » «Անպատկանալիքն արգիւր, անճանալիքն
 որ խաւարաւ. . . » եւ այլն: Ս. Սահակ Պարթեւի այս խօսքերը շին-
 ծու բանատեղծութեան ոչ մի նշան չունին. ով որ ուզենայ
 նոյա մէջ որոնել յետին դարերի արուեստական դարձուած-
 ները, նորա ջանքը զուր է եւ անօգուտ. որովհետեւ Ս. Պար-
 թեւի բոլոր շարականները ներշնչում են մարդուս մէջ մի
 անարուեստ պարզութիւն եւ բնականութիւն թէ լեզուի եւ
 թէ մտքերի կողմից. նոցա պարզութիւնն ու թեթեւութիւնն
 աւելի նորանով է բացատրուում, որ պատկերները միանգա-
 մայն ժողովրդական են եղած եւ կենդանի. խօսք չկայ, որ Ս.
 Պարթեւի խօսքերն իւր ժամանակի ժողովրդեան գաղափար-
 ների արտայայտութիւնն էր, որը տակաւին չէր կարողացել
 մոռանալ հեթանոսական գաղափարներն, ինչպէս որ ստուգուած
 է այդ միջանի այլ պատմական ցուցումներով եւս: Որչափ որ
 դժուարին է մի նոր կրօն, նոր սկզբունք թագաւորեցնել մի
 հին ժողովրդի մէջ, նորանից եւս առաւել դժուար է արմա-
 տահան անել մի հին ժողովրդի միջից այն նուիրական տար-

րերը, որ նորա հոգու հետ անբաժան մտկորդուած են, Առաւ-
 լորիչների գործն է այդ տարրերից ազնիւներն ընտրել, եւ
 նոցա վերայ պատուաստել նոր վարդապետութեան մտքերը
 կամ հաշտեցնել նոցա իրար հետ*) . յահա այդ ճարտիկու-
 թիւնն ունեցած են Հայոց քրիստոնէականութեան մէջ վար-
 դապետներն այսինքն՝ Ս. Լուսաւորիչ եւ Վարդապետները
 Թաւանգող նուիրական շառաւիղները, նոցա բոլորի սկզբնա-
 վան յաջորդութիւնն այն պատճառով մեծ եղաւ եւ անօրինակ
 որ նոքա քարոզում եւ դասում էին ժողովրդին մատչելի մըտ-
 քերով, նոքա երգում ու միաւորանում էին ժողովրդին ծա-
 նութագրանքներով, նոքա ճանաչած էին Հայ ժողովրդի սրտի
 այն լարերը, որոնք աստուածութեան գաղափարի հետ հա-
 զորդակից էին ու կարող էին շարժել Հայի լեզուն գէպի ճշմա-
 րիտ Աստուծոյ բարեբանութիւնը . . .

Մենք բոլոր այս մեր առաջները բնական անպայման պիտի
 համարենք հաստատելու թէ հին Հայերի հեթանոսական կրո-
 նը նոյն աստուածութիւններն էր ընդունում ինչ որ հին
 Պարսից եւ թէ այդ կրօնով աստուածացած էին իոյնք, կեան-
 քը, բարին եւ չն հակառակ խաւարի մահու, չարի եւ անպակա-
 նութեան։ Մինչեւ անգամ մանրամասնութիւնների մէջն էլ
 Հայոց հեթանոսութիւնը նման է եղել հին Պարսից հեթանո-
 սութեանը, զորօրինակ հին Պարսից կրօնով Որմիզդը միեւնոյն
 ժամանակ եւ յապաս եւ ամէշտապէնյաս էր բայց կոչուում է
 եւ արարիչ այդ օգիների, նոյնն է եւ Հայոց Արամազդը, ինչ-
 պէս տեսնելու ենք յետոյ, հին Պարսից մէջ մանր բարի աս-
 տուածութիւններ շատ կան եւ նոցա մէջ ոմանք կերակրի հա-
 մեղութեան, ոմանք օգերի քաղցրութեան, ոմանք անձրեւի ա-
 ռապութեան ոգի են ճանաչուած, նոցա հակառակ կան եւ

(*) Եթէ այս անգով նայելու լինիր Ս. զրքի Թարգմանութեան վերայ, այն ժա-
 մանակ մեզ հասկանալի կըլինին այն ճիշդ տարբերութիւնները, որ կան թերեւ նորա
 եւ ուրիշ ընտիր Թարգմանութեանց մէջ. սակայն նշանաւորն այն է, որ ընդհանրա-
 պէս շատ ընտիր եւ պարզ ոճ ունի Ս. զրքի Թարգմանութիւնը, որ դարձեալ մեր
 ասածն է հաստատում մինչեւ անգամ Ս. Թարգմանիչը աշխատած են մի քանի
 աստղերի եւ ամիսների անունները հայերէն գնել կամ թէ երբայկանի մօտ հայե-
 րէն մեկնութիւնն էլ աւելացնել։

չար՝ ոգիներ, որոնք խոչընդոտեցին նոցա յաջողութեանը. այս
կողմից էլ՝ չին Հայոց հեթանոսութեան մէջ պէտք է լինէր նը-
մանութիւն. որովհետեւ այժմ ժողովրդի մէջ կան միքանի
այդպիսի քաղաքականներ, զորորինակ մեր վերը յիշած պահա-
սրան հրեշտակը որ ամեն մարդու յատկացուցած է. կամ թէ
որ աստուծոն. հօր աստուծոյ, հայի հրեշտակ, որ հրեշտակ եւ լին
այն ամենը. նոյն հեթանոսութեան հետքերը պէտք է լի-
նին. նմանապէս եւ հողէ կամորձի քաղաքները որ վերջին դա-
տապտանն է յիշեցնում, նոյնն է՝ երեւում մեզ, ինչոր չին
Պարսից սիրէ թէ կամ զէնդանդէնացի լինաւն պստած դա-
տապտանն կամուրջը. Այսպէս թէ այնպէս, մենք գիտենք, որ
Հայոց հեթանոսութեան զարգացումը չմնաց նոյն ճանապարհ
հի վերայ ինչոր չին Պարսիցը. թերեւս երկրի աշխարհագրա-
կան դիրքը կամ նաեւ քաղաքական պայմաններն էին պատ-
ճառ այդ տարբերութեան. ուստի եւ առանց հեռանալու իւր
նախնական քիզը ունենորից՝ Հայոց հեթանոսութիւնը մի առան-
ձին ընթացք գտաւ. ունեցաւ իւր առանձին եկամուտ տարրե-
րը. իւր առանձին քաղաքական ասպարէզն եւ իւր յարուկ
պատմութիւնը, որ տրճանանում է ին մեհենական յիշատակա-
գրերի մէջ. Արդ աեսնինք թէ ինչպէս է ներկայանում հեթա-
նոս Հայն իւր պաշտած աստուածութիւնների մէջ.
Գլխաւոր եւ մեծ աստուածը կոչուում էր Արամազդ. այս
կոչումը նոյնն է ինչոր չին Պարսից եւ հարեւանների Ահու-
րամազդա (*). Որովհդ. Սրմուզդ առնունքը. Ահուրամազդա
նշանակում է էակեմութեան կամ տէր իմաստ. այսպէս կո-
չուում է Ահուրամազդան որովհետեւ նա է բոլոր բարի ոգի-
ների եւ բարութեանց արարիչը. արարչական զօրութիւնը զա-
նազան տեղ զանազան պատուանուն ունի. այդ կանխած է

(*) Ահուրամազդա, էակեմ, կրօնական մարդ նշանակում է եւ տէր, այս բառն
արմատակից է ասորիէն եւ երկուսի ընդհանուր արմատն է սանսկր. աս
= ինիլ բայը. ինչպէս որ ասորիւ եւ ասորւած նոյնանշան են եւ զոցա ընդհանուր
ստուգաբանութիւնն է հայերէն է (որ էն) բայը, որ յայտնի է, թէ նմանապէս Աս-
տուծոյ անուն է: Միեւնոյն արմատն է որ իբրեւ էական մնացած է եւ մեր մի
քանի գաւառականներում եւ որի մնացորդն է ա = է բայը. զորորինակ ուտում ա.
զնում ա. երի: այս խոսան ձեն բայը միեւնոյն յայտնած է:

իւրաքանչիւր ժողովրդի զարգացումից երբ ժողովուրդն իրեն
 շրջապատող բնութեան ազդեցութեան տակ՝ ամենայն երեւոյ-
 թից ահ եւ սարսափ է կրում՝ նա իւր պաշտած արարչական
 զօրութիւնը պատկերացնում է իբրեւ զինուորեալ եւ ուղմա-
 վար զօրութիւն։ այդ զօրութիւնն է որ շանթեր ու ամպրապ-
 ներ է արձակում բնութեան չար եւ վնասակար տարրերը Զրն-
 քեւու այդ զօրութիւնն է որ գոռալով որդտալով դողի մէջ է
 ձգում անթափանցելի անտառների ահարկու գաղանները եւ
 նոցա հետ միասին կենդանիներին թագն ու պսակը բանական
 մարդը ի վերջոյ այդ զօրութիւնն է որ խնում բնակում է
 դիւցազուններին մէջ եւ նոցա նետերին ու սրաքներին թռիւ է
 տալիս թշնամեաց հրոսակները վաճելու։ այսպիսով մի ահեղ ու
 որոտալից անտառածութիւն էր Հնդկաց Ինդրան կամ Յրենաց
 Գիտան ու Հռովմայեցոց Իւպիտերը։ Ետկայն այդպէս չէր հին
 Պարսից արարչական զօրութիւնը։ նոցա Ահուրամազդան կամ
 Որմիզդը երկնային թագաւորութեան մէջ նրին դիրքն ու նշան-
 նակութիւնն ունէր ինչոր երկրիս վերայ մահկանացու թագաւ-
 ւորները Պարսից եւ հարեւան ազգերի մէջ։ ազգերն իրենց պա-
 տուածութիւնքն իրենց վերայ իշխող գերագոյն զօրութիւնքը
 ներկայացնում են այնպէս ինչպէս որ երեւում է նոցա մէջքին
 երկրային իշխանութեան կամ թագաւորութեան պատկերը։
 այդ կողմից հին Պարսից եւ նոցա հարեւան ազգերի կրօնը մի
 հայելի է նոցա քաղաքական կազմակերպութեան որովհետեւ
 հին Պարսից եւ հարեւանների քաղաքական կազմակերպութե-
 թեան մէջ մի սահմանադրական սկզբունք կար։ Իւրաքան-
 չիւր գաւառ կամ երկիր ունէր իւր մասնաւոր քաղաքական
 սահմանները մասնաւոր տեղական օրէնսդրութիւնքը եւ իւր
 յատուկ թագաւորը։ Բայց որովհետեւ զինուորութեան կողմից
 կարող էր մէկը տկար լինել եւ միւսը զօրեղ կամ թէ որքան
 եւ կատարեալ լինէր դարձեալ հաւասարալիշուութիւն չպիտի
 լինէր բոլոր արքաների մէջ։ այդ պատճառով այդ արքաներից զօ-
 րեղագոյնի ձեռքն էր անցնում բոլոր միւսների առաջնորդու-
 թիւնը։ այդ առաջնորդութիւնը շատ անգամ հաստատուում
 էր պատահական յաջողութիւնների վերայ կամ փոխարկուում
 էր դէպի բռնակալութիւն։ Բայց մեծ մասով պահպանում էր

իւր նաւիրական նշանակութիւնն առողնց վնասելով քրկրի դա-
րաւոր սովորութիւններին եւ ակզբունքներին՝ այնպէս՝ մենք
տեսնում ենք որ ամբողջ Պարսկաստանի եւ Ասորիստանի վե-
րայն յայտնքն ինդ գետից (սկսած մինչեւ Եփրատը) քաղաքա-
կան գերիշխանութիւնը գտնուում էր արքայից արքայի տէրքի
սրն իւրեւ մի կեդրոնական զօրութիւն իւր մէջ միասորում եր-
միւս մասնաւոր արքայէրէ քաղաքական իրաւանութեան մի մասը
եւ երբեմն իշխում էր նոցա գահի վերնայ՝ կարգելով նոր ար-
քաներ *) և Ահա այժմ քաղաքական ակզբունքներին հայելին մենք
տեսնում ենք Հին Պարսից երեւակայած՝ երկնային թագաւո-
րութեան մէջ ամենիմաստ էակը, ամենայն բարիութեանց և ա-
րարիչը — Ահա զորմագղան ոչ ինդ րայի եւ Ռիսսի շանթարձակ
զօրութիւնն ունէր եւ ոչ էլ մի բուն իշխանութեան պատկեր
էր. նա ինքը մի աստուած էր այլ նստուածներէ մէջ որոնք
նորան գահակից են, որոնք ընդ նորա փառաւոր յատկու-
թիւններն ունին միայն թէ չունին նորա արարչական զօրու-
թիւնն, այլ ընդ հակառակին իրենք էլ նորա արարածներն են
այժմ անառնառով Ահա քամաղգան իշխում է տիեզերքի վերայ
միմիայն իմաստութեան շնորհիւ. իմաստութեան որ միակուն
միալ առաջնորդն է հաւաքականական գործերի մէջ եւ առանց
որի անկարելի է ոչ միայն միքանի աջակիցների հետ վարուել
այլ եւ ընկերութեանն աշխարհին քարութեան անառնառ
նել. Ահա քամաղգան այդ ամենիմաստ էակը Հին Պարսից հե-
նոցա հարեւաններն աչքում իւր այդ գերագոյն արժանաւո-
րութեան համար եւ աստուածապետ է հանդիսացած՝ այսինքն
առնառն առնառն. նորա թագականիցներն են ամէնապակաս
կոչուած չեց գերագոյն զօրութիւնքը, որոնց արարիչն էլ ինքն
Ահա քամաղգան է այդ թագականիցներն անունը նշանակում
արժ մասնակցութեամբ արժաւորում արժ արարչութիւն ման

(*) Թէ Հայոց նախնի-քաղաքական կազմութիւնն էլ այսպէս է եղել, այդ երե-
ւում է նորանից, որ իւրարանջիւր նախարարութիւն միայն մի քանի պայմաններով
կապուած էր Հայոց Թագաւորի հետ, իսկ տեղական իրաւասութեանց մէջ իւրա-
քանչիւր նախարար ունէր Թագաւորի իրաւունք եւ նշան. այս մասին յուսով ենք
մի ալ անգամ դէպք կունենանք անկի ընդարձակօրէն պարզելու եւ ապացուցա-
նելու մեր գաղափարը:

է. անձր (ամէշար) ասորէ (սպէնտա) քաջի այն Ահուրամազդէ
 գային արազիցում են յաշարաւ իրոշուած ոգիները որոնցից մէկն
 ինքն է եւ որոնց արարիչն էլ ինքն է այդ ոգիներն անունը
 նշանակում է արաշտի (յազատա) քաջի այն մականուններն
 Ահուրամազդային ասում է ին եւ անունը մայրաշ, որ նշանակ
 կում է ասորէ (սպէնտա) հաշի (մայնյուշ) այն մականունն
 պելի հաստանում է որ Ահուրամազդային գլխաւոր մեծուն
 թիւնը որա իմաստով թիւնն է Այս ամենից երեւում է որ
 հին Պարսից գերագոյն էակի իրոշումներն են որք կամ հաշի
 ասորաւ, ասորէ եւ անունը արաշտի եւ հաշի ասորէ
 - Այսպիսի մի յատկութիւն է ունեցել եւ Հայոց Ահուրամազ
 դան Արամազդէ անունը հետեւին չայերի գաղափարով
 Արամազդ մի ամենագէտ էակ է, միւսին ժամանակ նա է
 պնտուածների հայրը այսինքն ոչ միայն աստուած է այլ եւ
 ծնող պատուած ոյ, այլ եւ երկնի եւ երկրի արարիչ որան
 պատուում է ին ասորէ մականունով որ գործում է թեան Կե
 ժութեան խորհուրդումն է արի Արամազդն է որ շնորհում
 է երկրին ամենայն բարութիւն շիութիւն եւ պարտաւորութիւն
 երբ ին պարտաւոր է երկիրը նշան է այն ժողովրդի իմաս
 տութեան եւ ժրջանութեան որովհետեւ իմաստութիւնն
 անշահ է ունից ժրջանութեան ունի եւ Հայոց աստուած
 ների հայրն Արամազդ որ իմաստութեան պատկեր է նոյն եւ
 ժրջան (արի) է հանդիսացած հետեւին Հայի գաղափարով
 մէկն անանց միւսին ոյն է թէ հոգին առանց մարմնի ունի
 եւ իւր գերագոյն սթըն թիւններն գլուխը դրած է այդ մեծ
 գաղափարի պատկերն արի Արամազդ Ալիզները գուցէ Հո
 յերն է հին Պարսիկներին ման իմաստի կերպով էին արաշ
 տում Արամազդին, բայց Հայոց քաղաքական կեանքի զարգաց
 ման հետ զարգացաւ եւ Հայոց աստուած պաշտութեան եղա
 նակը մանաւանդ յունական քաղաքակրթութեանը ծանոթա
 նալուց յետոյ այս պատճառով եւ սկսեցին տեսնելի պատ
 իրանմանութիւն միայն իրարմիջեւ որովհետեւ իրարմիջ
 - այդ զին բնականաւոր մտաբանութիւնն ան միջոցաւ ըստ էջ ճշտութիւն
 ց (*) Մեզ այնպէս է իրեւում թէ Մասիս լեռն կոչումներից մէկը այդպէս լայն
 յազատա խորաց է մնացել «յազատ» ի վեր ի Մասիս նշանակում է ոչպիսիս պաշ
 տնի Մասիսը:

կերներ կանգնել իրենց իմանալի անտուածութիւնների տեղն
եւ մեհեանների ու բազիկների մէջ պաշտօն կատարել աշխ-
տէս հետզհետէ Արշակունի թագաւորների շնորհիւ որոնք
աւելի հոգով ու ունեւն յունակաւ եւ հոգով տեղանք քաղաքա-
կրթութեանը արմատացաւ Հայոց մէջ եւ կռապաշտութիւնը
որն առաւել հաստատուն կազմակերպութիւն դառաւ Հայոց
աշխարհակալ թագաւորներէն մէկը Տիգրան Երկրորդ ի օրով-
սա մեծ եռանդով կարգաւորեց Հայաստանի մեհեանները՝ աե-
ղաւորելով նոցա մէջ իւր հօր Արամայէսի Յունաստանից քերած
արձանները, ահա այն արձաններէն մէկն էր Յունաց Գիոսի
պատկերը, որ թերեւս իւր զաւաւստութեան եւ մեծագուն-
թեան համար արժանացաւ Հայոց Արամայի ի տեղը բնակւիւն
Այս գերագոյն տալի գլխաւոր անթուր գտնուում էր Բարձր
Հայրի Յօրանայեաց գաւառում մէկ Անի ամրոցում (որդի
Գամալի կամ Կամալք քաղաքի մօտերը) դր էր եւ Հայոց Ար-
շակունի թագաւորների հանգուարանը։ Բայց անկասկած ու-
րիշ տեղեր էլ գտնուում էր նորա պատկերը եւ որովհետեւ
մեր պատմիչները լռում են ուստի չենք կարող յանունէ յի-
շել միայն Սորենացին Հռիփսիմեանց պատմութեան մէջ յի-
շում է որ Արամայի պատկերը գտնուում էր եւ Վասպու-
րականի Անձեւայեաց գաւառում Պաղատ լեռան վերայ։

(ԿԶ-Ը-Զ-ԻԷ)։

Կ. Կ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՆԱՏԱՐԱՆԻ ԿՆՈՋ ԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(• ԱՐԱՐԱՏ • № 1)

1686 թուին Լուդովիկոս Ժ. արկին դը — Մէնտէնօնի թե-
լագրութեամբ հիմնեց Մէն - Սիրում, Վերսայի մօտ, Ս. Լու-
դովիկոսի դպրոցը, անդադար պատերազմների պատճառով
աղքատացած Ֆրանսիացի ազնուականների աղջիկների կըր-
թութեան համար։ Սկզբում այդ դպրոցը մի տեսակ դուարձա-
նալու միջոց էր թագաւորի համար, նա կգնար այնտեղ պա-
լատականների մեծ բազմութեամբ շրջապատւած, կուրախա-